

Ըղարբի Մէջ Գործող Միութեան Նախագահին Համաշայն ԹՈՒՐԲԵՌՈՅ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԷՏՔ Է ԲԱՅՈՒՐ

«Ի՞նչ Իմաստ Ունի Սահմանները Փակելը Երբ Ամէն Օր Հանրաշարժեր Ու Սաւառնակներ Կ'երթնան Երկու Երկիրներու Միջեւ»

Թուրքիոյ Արեւելեան Նահանգները, մասնաւորապէս անոնք որ սահման ունին Հայաստանի հետ, երկար ժամանակէ ի վեր կը տառապին Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ սահմանադրութեան փակ ըլլալէն։ Սահմանային նահանգները պարտաւոր են թափ տալ սահմանային առեւտուրի, իսկ եթէ սահմանը փակ է, այդպիսի հնարաւորութիւն մը չկայ։ Այս պատճառաւ է որ երկար ժամանակէ ի վեր Թուրքիոյ Արեւելեան Նահանգներու դեկալարները կողմնակից եղած են որ բացուին Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ առկայ սահմանադրները։

Այս ուղղութեամբ նոր ու հետաքրքրական տեսակէտ մը հրապարակեցաւ Ըղարբի մէջ գործող «Ընկերային Ցառանդութեան Միութիւն» (ՔԻՏԷՐ) անուն Թրքական Միութեան Նախագահ Մուրատ Աքբուշի կողմէ։ Աքբուշի ըսաւ որ սահմանը պէտք է բացուի ու ան իր այս պահանջը հիմնաւորեց շահեկան վերլուծութեան վրայ։ Աքբուշի յիշեցուց որ Թուրքիոյ Հայաստանի հետ ունի երկու սահմանադրութիւն։ Մէկը Կարսի Արեւելեան դուռն է, որ կը բացուի Հայաստանի Կիւմրի քաղաքին վրայ, իսկ միւսը Ըղարբի Ալիճան սահմանադրութիւն է։ Այս երկու դուռներն այլ ներկայիս փակ են։ «Մենք կը մտածենք որ այս երկու դուռներն այլ պէտք է բացուին, ըսաւ Աքբուշի։ Ներկայիս, հակառակ որ դուռներ փակ են, արդէն Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ առեւտուր կը շարունակուի Կրաստանի վրայով։ Ամէն օր Երեսնէն դէպի Իսթանպուլ հանրաշարժերու ու առեւտրականութեան կապեր կան։ Երբ այսպիսի երթեւեկ մը արդէն կայ, ի՞նչ իմաստ ունի սահմանները փակելը։ Ատենօք ես այլ կը մտածէի որ դուռն պէտք չէ բացուի որովհետեւ տեսած էի որ Հայաստանի դրամին վրայ Աղբը լիւրան պատկերը կայ։ Մինչդեռ հիմա կը մտածեմ որ ատիկա ի՞նչ վնաս ունի, որքան ատեն որ Աղբը լիւր արդէն մերն է։ Անկի լաւ, ասիկա ծանուցումային արժէք կ'ունենայ, թող ամբողջ աշխարհ գործածէ Աղբը լիւրան պատկերը»։

Աքբուշի կարծիքով, եթէ սահմանադրները բացուին, երկու երկիրները աւելի յարմար պայմաններու մէջ պիտի կարենան խօսիլ անցեալի ժխտական պատահարներուն մասին, եթէ պէտք ըլլայ մենք այլ պէտք է մեր անցեալին հետ առեւտուրենք, ըսաւ

Շարք կարդալ Դ. Էջ

ՊՈԼՍՈՅ ՄԵԽԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԶԱՏՈՒԿ ԵՐԵԿՈՐ ԽԱՆԴԱՎԱՌ ԿԵՐՊՈՎ ՏՕՆԱԽՄԵՌՈՒԵՑԱՐ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՉ



Խումբ մը միախառնակի սաներ։

Թրքիոյ մէջ պատուակալ աշխատակից Պր. Յարութիւն Դերմախեան կը տեղեկացնէ մեզի։

Միւլիթարեան Սանուց Միութիւն-Թորոնթոն (ՄՄՄԹ), որ աշխարհագրիւ Միւլիթարեան Միաբանութեան սաներէն կարողութեամբ է, ան իր տեսակին մէջ եղակի համամիւլիթարեան սանուց միութիւն մը եղած է։ Մայիս 2009ին իր հիմնադրութեան թուականին ի վեր իր առաքելութիւնը յաջողութեամբ կը շարունակէ կազմաւորելով որակաւոր զանազան ձեռնարկներ, որոնք կ'արժանանան հարուստիան ջերմ գնահատանքին։

Միւլիթարեան Սանուց Միութեան վարչութիւնը Պէլլուի եւ Հալլայի Միւլիթարեաններէն յետոյ այս տարի

տեղին որոշում մը առած էր վեցերորդ տարուայ հաւաք խորհրդակցութեան ընթացքին Պոլսոյ Միւլիթարեան Վարժարանին։ Այս ձեռնարկը նուիրուած էր նաեւ հայոց ցեղասպանութեան 100ամեակին, ինչպէս նաեւ վարժարանի հիմնադրութեան 190 ամեակին, որ տօնակատու 23 Մայիս 2015 Շարքէ երկրոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ ներքնաբարձին մէջ, հովանաւորութեամբ տոյն եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերարդի Ս. Կարապետ Ս. Վրդ. Քիրէնեանի։ Այս առթիւ որոշեց Պատուով հիւր եւ օրուայ պատգամաբեր յատկապէս Պոլլուի հրաւիրուած էր, Պոլսոյ Միւլիթարեան Միաբան

Շարք կարդալ Բ. Էջ

ՊԷՇԻԿՈՒՄԵՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԻՐ ՄԵԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒԹՓԱԿԸ ԿԱՏԱՐԵՅ ՍԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍՈՎ ՄԸ



Պէշիկիւմաշի քաղաքացի Մուրատ Հադինէտար երէկ «Յոր Սիլըն» պանդոկի պահանջներէն մէջ սարքից մամուլի առաւելի մը ու իր մէկ տարուայ պաշտօնավարութեան հաշուետեկութեան կատարեց կենդանի հաղորդումով արեւմտեան ծառայուն ու համապարփակ բացատրութիւններով։ Քաղաքացիներ տեղական

Շարք կարդալ Դ. Էջ

ԱԼԻՍ ՇԱՀԻՆՈՂԼՈՒԻ ՀԱՄԵՐԳԸ ՔԷՆՈ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀԻՆ ՄԷՉ



Ալիս Շահինօղլու, Ասրուշան Հալաւան, Շան-Ռեհա Կիմ, Սիմօն Եւրօպոլսաւ։ Եւ Ֆուսուա Կիլլիս։

Երէկ զինքն ամէն անոնք որոնք գացած էին Շիշլիի Քէնթ հանդիսարան, հետեւեալ համար Ալիս Շահինօղլուի համերգին, հոգեկան վերանորոգումի եւ երաժշտական խնջոյքի ապրումներ ունեցան։ Համերգը իսկական խնջոյք մըն էր մասնաւորաբար օրհնային սիրահարներուն համար։ Ձեռնարկին ներկայ գտնու

Շարք կարդալ Դ. Էջ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆ ԿՈՂՄԷ ՀԱՅ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ ԱՅՍ ՏԱՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԸ ՊԻՏԻ ՏՕՆԵՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ Ս. ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ



Հաճոյքով կը հաղորդենք որ այս տարի աշխարհի զանազան կողմերէն, բայց մասնաւորաբար Ֆրանսայէն ժամանելու կողմած մեծամիւլ հայ ուխտաւորներ Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը պիտի նշեն Տիգրանա-կերտի Սուրբ Կիրակոս վերանորոգուած շէնք եկեղեցւոյ մէջ։ Այս մասին այժմէն տեղեկութիւն պատրաստութիւն կը տեսնուի, որպէսզի այս ուխտագնացութիւնը ունենայ լայնածաւալ մասնակցութիւն ու դառնայ յիշատակելի օր պատմական Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ ու Տիգրանակերտի Հայ կամ տեղացի բնակիչներու համար։

Կաթմակերպիչ յանձնարարներէն մէկն է Շուշան Քերովեան, զուտոր հայ ժողովրդական երաժշտութեան յայտնի մանկաբան Արամ Քերովեանի։ Ան անցեալ օր քաղաք եկած էր, Տիգրանակերտի մէջ եւս որոշ չփութներ ունենալէ ետք։ Շուշան Քերովեան անցեալ չարաթ իմբացարարուն այցելեց առաջնորդութեամբ Հայաստան Իսթանպուլ օդանւակային առաջին թռիչքը իրականացնող «Արմաֆա - Արդի Թուր» ճամբորդական ընկերութեան սեփականատէր Ողբ. ինչպիսի կողակից Վերթին Սէօղիթի։

Շուշան Քերովեան, որ շատ խանդավառ ու համակերպիչ Հայուհի մըն է, մեզի

Շարք կարդալ Դ. Էջ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆ ԿՈՂՄԷ ՀԱՅ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐ ԱՅՍ ՏԱՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԸ ՊԻՏԻ ՏՕՆԵՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ Ս. ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Անգիւղի մայրաքաղաք Լոնտոնի մէջ բնակող Աղբիւններ ցոյց մը կազմակերպեցին Լոնտոնի մէջ Հայաստանի Դեսպանատան առջեւ։ Անոնք կը պահանջէին որ Հայաստան արտաքին գործերի ներքին ազդեցիկները որոնք զերկարուած են ու հիմա կը դատուին Նախագահի սահմանէ ներս մտած ըլլալու յանցանքով։ Ցուցարարները մ'եր գերիները վերադարձուր» գրուած փրատուութիւններ կը պարզէին։ Լոնտոնաբնակ Թուրք քաղաքացիներն այլ միացան Աղբիւններուն։

Հայկական ուժերու կողմէ վերջերս գերեզմանուած էին Տիգրէմ Աքբուշի ու Շահպաղ Կիլլիս։ Անոնք ներկայիս կը դատուին Հայաստանի մէջ։ Աղբիւնները «Ինքն զոհարար» կոչեցին այդ դատարանը։ Անոնք ըսին որ

Շարք կարդալ Դ. Էջ

ՀԵՏԱՐՔՐԱԿԱՆ ՄՕՏԱԼՈՒՏ ՀԱՄԵՐԳ ՇԻՐԻՆՈՂԼՈՒ ՍՐԱՀԻՆ ՄԷՉ

Հաճոյքով կը հաղորդենք որ 29 Մայիս 2015 այս Ուրբաթ իրիկուն Ֆէրիդիւղի Ս. Վարդանանց եկեղեցւոյ Շիրինօղլու սրահին մէջ պիտի տարբուի երգի ու պիտի զատուի երգի ու դաշնակի խնջոյք մը։ Ֆէրիդիւղի Ս. Վարդանանց եկեղեցւոյ Թաղային Խորհուրդի նախաձեռնութեամբ Չորեքշաբթի ստուտան ղեմ Երեսնէն քաղաք կը ժամանեն երգիչ Սարգիս Բաթրէ ու Մեփիքեան ու դաշնակահար Արա Պետրոսեան, որոնք Ուրբաթ զինքն ի հանդէս պիտի գան յայտագրով մը որ կը բաղկանայ մասնաւորաբար Հայ երաժշտութեան

Շարք կարդալ Դ. Էջ

ՅՈՒՇԱՏԵՏՐ ՊՏՈՅ ՄԸ ՀԱՅՈՅԼԵՃՈՒԻ ԲԱՌԱՐԱՆԻՆ ՄԷՉ (656) ՄԵՂԲԸ

Կրկնեք որ Հայերէնի մէջ իրարու նմանող բառերը միշտ ծուլակներ պիտի լարեն դանոնք սխալ գործածողներուն կամ դանոնք սխալ հասկողներուն համար։ Բացմաթիւ օրինակներ թուեցինք ու զեռ ալ կրնանք թուել այս մասին։

Այս աշխարհի մէջ ամէն ինչ անցաւ է։ Ոչ մէկ բան յաւիտեանս պիտի ապրի։ Թերեւս միայն Մայր Բնութիւնն է որ յաւիտեանս է։ Միայն ան է որ յաւիտեանս պիտի ապրի շարունակ ինքզինքը նորոգելով։ Իրաւունք ունի մեր մէկ բարեկամը, եթէ լաւ։

- Ես անցաւ որ եմ այս աշխարհի վրայ։ Բայց չըլլայ որ սխալ հակնանք ու կարծենք թէ ան կ'ըսէ։

- Ես յանցաւ որ եմ այս աշխարհի վրայ։

Անցաւ որ է, յանցաւ որ է։ Թերեւս աշխարհի ամէնէն անմեղ մարդն է, բայց ինչ բնէնք որ «Անցաւոր» են։ «Յանցաւոր» ինչն է միայն մէկ տառի տարբերութիւն կայ։

«Թերեւս աշխարհի ամէնէն անմեղ մարդն է» ըսինք վերը։ Բայց եկէք անգամ մը հարց տանք թէ աշխարհի վրայ բառին իրական իմաստով հարկը տուող անմեղ մարդ կ'ա՞յ։ Կրնայ ըլլալ այդպիսի բան մը։ Մարդիկ, որքան ալ բարի ու արդար ըլլան, երբեմն գիտակցաբար կամ անգիտակցաբար յանցանք չեն գործեր, խաբիւր է որ մարդ մը ամբողջ կեանք մը ապրի առանց յանցանք գործելու, առանց բանով մը յանցաւոր կամ մեղաւոր դառնալու։ Մեր վերալիկալ բարեկամը Իրաւունք պիտի չունենայր բանուր։

- Ես անցաւ որ ես յանցաւոր եմ այս աշխարհի վրայ։

Բայց այս նիւթը կը բանանք ոչ թէ որդեգիր բարոյաօտակար մտածումներու յանձնարար, այլ որդեգիր քիչ մը մտածենք սա «Յանցաւոր» կամ «Մեղաւոր» բառերուն վրայ։

Այ գիտե՛ք որ այս երկու բառերուն ետին դրուած «Անք» կը նշանակէ «Ընկեցող»։ Յանցանք ունեցող, մեղք ունեցող։ Դեռ ի՞նչ «Անք»ներ ունինք. պիտաւոր, մօրուստար, պատուար, հետաւոր, թեւաւոր, մօտաւոր, զօրաւոր, պարտաւոր, պարտաւոր, դատար, փառաւոր, դրահար, դատար, հարկաւոր, յուզարկաւոր, եւայլն։ Բոլոր այս բառերուն մէջ «Անք»ը լաւ գործ կը տեսնէ։

Բայց կրնա՞նք արդեօք տարբերութիւն մը նշանակել «Յանցաւոր»ին ու «Մեղաւոր»ին միջեւ։ Անկի ճիշդ յանցանքին ու մեղքին միջեւ։ Կր կարծեմ որ կրնանք։ Այն տարբերութիւնն ունինք որ յանցանքը աշխարհիկ դատարաններու ղեմ կատարուած ժխտական չարութիւն է, իսկ մեղքը երկնային դատարանին ղեմ կատարուած ժխտական չարութիւն է։ Աշխարհիկ օրէնքները մեղք բաժն են, «Մի գողնա՛ր»։ Ուրեմն եթէ գողնանք, աշխարհիկ յանցանք գործած կ'ըլլանք, դատարանի առջեւ հաշիւ կուտանք։ Բայց մեր կրօնքն այլ ալ մեղք «մի գողնա՛ր» բաժն է։ Ուրեմն եթէ գողնանք, նաեւ երկնային մեղք գործած կ'ըլլանք։ Օր մը հաշիւ պիտի տանք երկնքի մէջ։

«Մեղք» բառը բառագիտական տեսանկիւնէն հետաքրքրական բառ է։ Նշմարած ըլլալու ենք որ ասիկա երկու տարբեր իմաստներ ունի։ Առաջինը երկնքի ղեմ գործուած յանցանքն է։ Բայց «մեղք»ը է նաեւ կարեկցութեան արտայայտութիւն։ Անուանիկ օրինակ մը։ «Խեղճ տղան շատ յոգնեցաւ, մեղք է, թող հանգչի մը»։ Հոս ի՞նչ բան ուղեցինք։ Ըսել ուղեցինք որ տղան շատ յոգնեցաւ, կարեկցութեան արժանի է, թող հանգչի։ Ըսել չուղեցինք որ տղան շատ յոգնեցաւ, յանցանք է, թող հանգչի։ Ուրեմն իր այս իմաստին մէջ «մեղք»ը կը գաղթի Աստուծոյ գգոհութեան առարկայ դառնալ, ընդհակառակը, գգոհանաւոր Աստուծոյ գգոհանաւորին։ Արդարեւ Աստուծանահաճող գործ է «մեղքաւոր» տկարներուն, խեղճներու, անբախտներուն, աղքատներուն, հաշմանդամներուն, օգնութեան կարիք ունեցողներուն, եւայլն։

«Մեղք» բառին այս երկու հակառակ իմաստներուն պատճառաւ իրարմէ բոլորովին տարբեր են նաեւ անոնց մով շինուած բայերը։ Յանցանքը նշանակող «մեղք»ով ունինք «Մեղանքի» բայը։ Իսկ կարեկցութեան նշանակող «մեղք»ով ալ ունինք «Մեղքնալ» բայը։ Անուանիկ հոս երկուքը բոլորովին գաղափարներ իրարմէ։ Եւ յատկապէս երկուքին իրարմէ տարբերութիւնը։ Աստուած մեղ հետեւ պահէ մեղքներէն, բայց Աստուած միշտ մեղ պահէ մեղքնալու առաքելութեան մէջ։ Մեղքնալը այնքան ալ դիւրին գործ չէ։ Ան որ մէկու մը վրայ անկեղծօրէն կը մեղքնայ, որոշ ցաւ մը կը գալայ, հոգեկան անհանգստութիւն մը կ'ապրի, մինչդեռ ան որ ուրիշներու ցաւերուն նկատմամբ անտարբեր ու անզգամ է, որեւէ ցաւ չունի արտին ու խղիւն վրայ, հանգիստ է։ Անշուշտ Աստուած պիտի չախորժի անկէ, բայց ան այս կէտին վրայ ես անզգամ ու անճոյ է։ Աստուած իրմէ կ'ախորժի կամ չ'ախորժի, հոգը չէ։

Մենք անշուշտ սիրով պիտի նախընտրենք զգալուն ըլլալ, տկարներու վրայ կարեկցիլ, անբախտներուն համար ցաւ զգալ, նոյնիսկ ասոր համար ալ աստապիլ, փոխանակ անզգամ մարդ մը ըլլալու։ Ուրիշին ցաւը բարեկեր մասամբ պիտի թէթեւցնէ մեր խղիւնը այն ծանօթ կամ անծանօթ սխալներէն կամ մեղքերէն զոր մենք ալ գործած կրնանք ըլլալ։ Մարդիկ իրենց խօսակցութեան ընթացքին յաճախ կ'ըսեն. «Ինչ մեղքս պահեմ»։ Ըսելու լաւ ձեւ է ասիկա։ «Ինչ մեղքս պահեմ, նախանձեցայ անոր յաջողութեան»։ «Ինչ մեղքս պահեմ, շատ բարկացայ այս խօսքին դիմաց»։ «Ինչ մեղքս պահեմ, ես խելացի գործ չ'աւանդեմ», եւայլն։

Մեղք գործելը իրականութեան մէջ մարդուն համար ճակատագիր է։ Ծակաւորակը որ մեր վրայ գրուեցաւ տակաւին Արամով ու Եւայով, այս երկուքին գործած «Սկզբնական մեղք»ով։ Եւ մենք, Արամէն ու Եւայէն մինչեւ մեղք հասնող այս անթեքական իրաւունք երկար ժամանակի ընթացքին ինչ նոր մեղքեր ստեղծեցինք մեզի համար։ Եւ ո՞վ գիտէ զեռ ինչ նոր մեղքեր պիտի ստեղծենք։ Հիմա ի՞նչպէս չընենք։

«Մեղք մեր այս մեղքերուն»։

ՊՈԼՍՈՅ ՄՏԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԱՏՈՒԿ ԵՐԵԿՈՆ ԽԱՆԴԱՎԱՌ ԿԵՐՊՈՎ ՏՕՆԱԽՄԲՈՒԵՑԱԲ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՁ

Շար. Ա. Էջեմ

նութենէն, վարժարանի փոխ տնօրէն Գերարդիւի Հայր Յակովբոս Ծ. Վրդ. Չօփուրեան:

Սրահը ամբողջութեամբ լեցուած էր Մխիթարեանի սաներով եւ համակիրներով, որոնք եկած էին Թորոնթոյի կողքին, Ֆրանսայէն, Նիւ Ճորճիէն, Նիւ Եորքէն, Լոս Անճէլըսէն, Մոնթրէալէն ինչպէս նաեւ շրջակայ քաղաքներէն, բաժնեկու համար այս օրուայ տօնին առթած ուրախութիւնը:

Սեղաններու օրհնութիւնը Հայր Եղիա եւ Հայր Յակովբոս Ծ. Վարդապետներու կողմէ միասնաբար կատարուելէ ետք, Հայր Եղիան այս առթիւ հակիրճ կերպով իր սրտի խօսքը փոխանցեց:

Ընթրիքի սպասարկութեան աւարտին, հանդիսավար Յակոբ Դարեանի ողջոյնի խօսքէն ետք Մովսէս Հայկիթեան, դաշնակի ընկերակցութեամբ Ալեքսանտրա Պալեանի, մենեքեայ «Մխիթարի քայլերը»:

Մխիթարեան Սանուց Միութեան վարչութեան Ատենապետ Եղուարդ Պալեան բեմ բարձրանալով առաջին հերթին շնորհակալութեան եւ երախտագիտութեան ջերմ գգացումները յայտնեց հանդէպ Հայր Եղիա Ծ. Վրդ. Քիրէյեանի որ միշտ քաջալերած եւ հովանաւորած է ՄՍՄ աշխատանքները:

Ջերմագին ողջոյններով բարի գալուստ մաղթեց Հայր Յակովբոս Ծ. Վրդ. Չօփուրեանի որ Մայիս ամսուան եկեղեցական եւ դպրոցական բաղմնաժողով օրերուն չմերժելով հրաւերը, սիրով ընդառնած էր, իբր օրուայ պատուով հիւր եւ պատգամաբեր: Ուրախութեամբ յայտնեց, թէ Թորոնթոյի Մխիթարեան Սանուց Միութիւնը իր հիմնարկութեան վեցերորդ տարին կը բոլորէ համախմբելով անխտիր բոլոր վարժարաններու եւ վանքերու սաները, նպատակ ունենալով Մխիթարեաններու փոխանցած հոգեւոր եւ մշակութային ժառանգը վստ պահել հայ ժողովուրդի գաւակներուն մէջ:

Պրն. Պալեան մասնաւորաբար նշեց ըսելով «Մխիթար Արքայայր որպէս երկրորդ Մաշտոց բացառիկը ունեցաւ հայ մշակոյթին, հայ լեզուին փրկութեան, ուսնալ եւ ազատասէր վարդապետներ ծառայեցին եւ կը շարունակեն ծառայել Մխիթար Արքայայր զատարարակութեամբ եւ շնորհքով: Սորվեցանք սէր հանդէպ Աստուծոյ, մեր լեզուին, ազգին եւ ծառայել հայրենիքին ըստ Մխիթար Արքայայր կտակին:

Ձեր ներկայութեամբ մեր կապերը կրկին հաստատուեցան մեր վարժարանին հետ, հանգեցք մեր սիրոյ ողջոյնները փոխանցել Հայր Սարգիսին եւ



Հայր Յակովբոս Ծ. Վրդ. Չօփուրեան – Եղուարդ Պալեան – Լիմ-Անոյշ Իշնար – Ռուքիա Քեօշկերեան:

մեր սիրելի վարժարանին»:

Հայոց ցեղասպանութեան 100ամեակին առիթով Մովսէս Հայկիթեան, դաշնակի ընկերակցութեամբ Ալեքսանտրա Պալեանի արտասանեց Դանիէլ Վարուժանի «Ձօն» քերթումը: Այնուհետեւ մեր երիտասարդ սերունդէն Ալեքսանտրա Պալեան երաժշտութիւն Աւնո Պապաճանեանի «Էլեգիա» կտորը դաշնակով գեղեցկօրէն մեկնաբանեց: Ապա բեմ բարձրացաւ սփրանս Լին Անոյշ Իշնար, որ ինչպէս միշտ, այս անգամ եւս իր իւրաքանչեւ քաղցր ձայնով բացառիկ գեղեցկութեամբ մեկնաբանեց Կոմիտաս Վարդապետի «Ձայն տուր ով ծովակ» կտորը: Այս եւ յաջորդ երգերուն մէջ դաշնակով իր մասնակցութիւնը բերած Մայքըլ Պէրքովսքի:

Հանդիսավար Յակոբ Դարեան օրուայ պատգամաբեր Հայր Յակովբոս Ծ. Վրդ. ի կենսագրականը հակիրճ տողերով ներկայացնելէ ետք, Վարդապետը հանդէս եկաւ ու իր սրտի խօսքը փոխանցեց ողջունելով ներկաները հետեւեալ կերպով. «Ուրախութեամբ առյուծեալ ձեր մտերմիկ ջերմ մերձեցումները հոգեկան ներշնչութիւն մէջ գգալով, սիրով կը բարեւեմ ձեզ: Հարկւրինստեւ ամենակ տօնող Խմբակային Բանկայթը Վիեննական Մխիթարեան կրթօճակին եկած եմ: Մեծ ապէս կը գնահատեմ ու կը շնորհակալեմ Թորոնթոյի Մ.Ս.Մ. որ կը բոլորէ վեցերորդ տարին: Ձեր հայ ոգին դրօշը ի ձեռին Գանատայի մէջ յարատեւելը, աննկուն

մնալը արդէն հայ ազգի գոյութեան նպատակին, մշակութային դանձերու պահպանումին եւ ծանօթացման կարեւորագոյն նպատակ է: Դուք այս միութեան օրինակելի հիմը դրիք, ձեր յաջորդները, ձեր արիասիրտ դաւակներն ալ յոյսով եմ ձեր ոգիով դայն ժամանակի յարմարելով պիտի ձեւաւորեն ու շարունակեն: Ոյժ կրօնի, յաջորդութիւն, դիւրութիւն կը մաղթեմ, կ'օրհնեմ ձեզ ու ձեր բարեջան աշխատանքը»:

Մեծ արեւոյ Հայր Յակովբոս, Մխիթարեան վարժարանի Մեծ աւուր Մաք. Հայր Սարգիս Ծ. Վրդ. Էրմէնի, վարժարանի տնօրէններուն, կրթական մշակներուն ողջոյններն ու խնդակցութիւնները փոխանցելէ ետք, ամփոփ կերպով տեղեկութիւններ տուաւ վարժարանի գործունէութեան մասին, մանրամասնութիւններ փոխանցեց վարժարանին պատկանող կալուածներու շինարարական աշխատանքներու զարգացումներու մասին: Հակիրճ տեղեկութիւններով անդրադարձաւ նաեւ բոլոր Մխիթարեան վարժարանի «Պոմոնթի Ս. Ղազար Հայ կաթողիկէ» նախակրթարանի կացութեան: Այս ուրախ տօնի առիթով Հայր Յակովբոս առ ի գնահատանք Մ. Ս. Մ. Վ. ի Ատենապետ Եղուարդ Պալեանին նուիրեց արծաթեայ պնակ մը:

Գաղութի ապագայ խոստացող երիտասարդուհիներէն Ռուքիա Քեօշկերեան յայտնութիւն մը եղաւ, նախ մեկնաբանելով Գ. Էմինի բառերուն վրայ, Ա. Էքիմեանի կողմէ յօրինուած «Կռուկ բարով դառնա» երգը, ապա Թոմաս Ճիլփանի Ալլիսոնի «Ատանօ» կտորը:

Պոլսոյ Մխիթարեան վարժարանի 1955ի շրջանաւարտներէն Ալպէր Մարտիկեան, որ յատկապէս այս օրուայ համար Ֆրանսայէն ժամանած էր, յայտնեց վարժարանի սաներուն իր սրտի խօսքը փոխանցեց:

Կարօ Գալուքեան, որ իր ներդրումը բեւեռ է Մխիթարեան Սանուց Միութեան կազմաւորման եւ աշխատանքներուն, իբր գնահատանք միութեան անդամներէն Արամ Իշնարի ձեռամբ ստացաւ յուշանշան մը: Մ.Ս.Մ. Վ. Անուսով Հայր Յակովբոս Ծ. Վարդապետին նուիրուեցաւ միութեան խորհրդանշանը ներկայացնող ոսկեայ լամբակի տակ մը, իսկ ձեռք Գալուքեանին գեղեցիկ ծաղիկ-փունջ մը: Մինչ այդ Պոլսոյ Մխիթարեան վարժարանի յաջող սանութիւններէն Թէնի Տէմիրէրին յատկացուեցաւ տարեկան:

Մ. Ս. Մ. Վ. Թորոնթոյի վարչութեան անդամներէն Եսայի Սարգիսեան իր սրտի խօսքին մէջ ուրախութեամբ յայտարարեց, թէ Կիրակի օր Վենետիկ Սուրբ Լուգար Մայրավանքին մէջ Լուսակրօն քահանայ պիտի ձեռնադրուէին Հայաստանցի երկու սարկաւազները:

Այնուհետեւ միութեան վեց ամեայ տարեդարձի

կարկանդակի հատումը կատարուեցաւ վարժարանի նախկին արժանաւոր սաներէն Պերճ Արադի եւ Յովհաննէս Երանճեանի կողմէ, որոնք յատկապէս եկած էին այս երեկոյթի համար Նիւ Ճորճիէն:

Երաժշտական բաժինը շարունակուեցաւ Լին Անոյշ Իշնարով, ան նախ մեկնաբանեց երգը. Սալատուր Աւետիսեանի «Որտեղ գտնեմ քեզ», ապա Գարոսի «Բոր ունա գապիս» կտորները, դաշնակի ընկերակցութեամբ Մայքըլ Պէրքովսքի:

Մեր արժանաւոր երիտասարդուհիներէն Ալեքսանտրա Պալեան երգը. Կոմիտաս Վարդապետի «Ունայի Մարայի» եւ Աւնո Պապաճանեանի «Էքսի-րումթ» կտորները խիստ յաջող կերպով մեկնաբանեց դաշնակի վրայ:

Լին Անոյշ Իշնար եւ Ռուքիա Քեօշկերեան դաշնակի ընկերակցութեամբ Ալեքսանտրա Պալեանի քառաձայն մշակում Ջարեհ Վրդ. Աղնաւորեանի, խօսք Նահապետ Ռուսինեանի «Կիրիկիա» ապա վերջին կտոր երգը. Գուրգէն Ալէմաշի, խօսք Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանի «Հայաստան» կտորները մեկնաբանեցին ու արժանացան ներկաներուն բուռն ծափահարութիւններուն, երեք երիտասարդներն ստացան գեղեցիկ ծաղիկփունջեր:

Աւարտին Ատենապետ Պրն. Պալեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակից արուեստագէտներուն եւ ներկաներուն: Ան յայտարարեց թէ յաջորդ տարի պիտի յիշատակուի «Մուրատ Ռաֆայէլեան» վարժարանը որ ներկաներուն կողմէ մեծ ուրախութեամբ դիմաւորուեցաւ:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

24 Մայիս 2015 Կիրակի առաւօտ Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագը մատուցանեց եւ իր պատգամը փոխանցեց Պոլսոյ Մխիթարեան վարժարանի միաբաններէն Գերգ. Հայր Յակովբոս Ծ. Վրդ. Չօփուրեան, իր քով տարնիթերակալ ունեւորով եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերգ. Հայր Եղիա Ծ. Վրդ. Քիրէյեան:

Ս. Սեղանին սպասարկեցին գեղաձայն սարկաւազ ուղարկներ, իսկ երգեցողութիւնները կատարուեցան երկսեռ երգչախումբի կողմէ խմբավարութեամբ Եսայի Սարգիսեանի:

Հոգեգալստեան տօնի առիթով Հայր Յակովբոս աւուր պատմեց իր պատգամը փոխանցեց, ապա տեղի ունեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօնի յիշատակ անդարձ բաժնետուր միաբաններու, տնօրէններու, ուսուցիչներու եւ սաներու հոգիներուն ի հանգիստ:

Յաւարտ Ս. Պատարագի եկեղեցւոյ ներքնաբաժնի մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, Հայր Յակովբոս առիթով ունեցաւ սաներու եւ համակիրներու հետ մօտէն զրուցելու եւ նկարուելու:



Կարկանդակի հատում: – Չախէմ աջ Եղուարդ Պալեան, Պերճ Արադ եւ Յովհաննէս Երանճեան:



ՄՐՏԻՆ ՉԱՅՆԸ

Գրեց ՓԻԷՌ ՏԸ ՔՈՒԼՎԷՆ
Թարգմանեց Յ. ՔԷՇԻՇԵԱՆ

– Պարոն տը Քրոստիէօ, ես կը գարմանամ որ չէք վախցած ամերիկոսէին մը հետ ամուսնանալ, ըսաւ Աննին որ կ'ուզէր մէկէ մը իր պարտութեան վրէժը լուծել:

– Պատճառն այն է որ բնութեամբ քաջ եմ ես, օրիորդ եւ ինքզինքս զօրաւոր կը գգայի թէ իմ կնոջս կողմէ միշտ յարգանք եւ հնազանդութիւն պիտի տեսնի, ով որ ալ ըլլար անիկա:

– Ա, խեղճ Ամերիկոսէիներ, ի՞նչ գիտնային թէ ինչ կը ապասէ իրենց Եւրոպայի մէջ, ըսաւ Քրոստիէօն կատակասէր չեշտով մը:

– Եթէ գիտնային, ամէնքն ալ հոս պիտի գային, ըսաւ պարոնը արագօրէն. յետոյ նշմարելով ծծուն թուղթերն ու սկսած նամակները ըսաւ. ա՛, ձեր թղթակցութիւնները կը գրէիք, վստահ եմ որ երկկուսան պարահանդէսի մասին սիրուն նկարագրութիւններ գրած էք: Հարկւր տարի վերջ, Միացեալ Նահանգներու մէջ, Եւրոպայի մասին հետաքրքրական փաստաթուղթեր պիտի գտնուին եւ թանկարժէք դարձած թղթակցութիւններ:

– Յուսանք որ մերկներն ալ անոնց կարգին պիտի

գտուին, ըսաւ Աննին:

Երկու երիտասարդները ոտքի ելան եւ հրաժեշտ առին: Մինչ Տիկին տը Քրոստիէօն վերադառնալ կը հազնէր, Օր. Վիլլառ ըսաւ պարոնին.

– Ուրեմն, այդ երկուքին գնումը ձեզի կը վստահիմ:

– Շատ լաւ, վաղը չէ միւս օր ձեր տրամադրութեան տակ պիտի գտնէք, եւ պիտի սկսինք մեր առաւօտեան պտոյտներուն:

– Ուրախ եմ, մարդանքի եւ բաց օդի պէտք ունիմ: Մեկնելու պահուն, մարքիդը աղջկան աչքերուն մէջ յայելով ըսաւ.

– Ոյ չէք պահեր չէ՞ եւ առաջին անգամ ըլլալով ձեռքը անոր երկրպեց:

Աննի նմանապէս իր ձեռքը անոր տալով, ըսաւ զուարթ ժպիտով մը.

– Ոչ մէկ ոյս:

Հիւրերը մեկնելէն վերջ, Տիկին Վիլլառն ու երկու աղջիկները շարունակեցին իրենց նամակները, սակայն Աննիին միտքը վրան չէր:

ԽԱՍՁ = ԲԱՄ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՁԱՆԷՆ ԱՅ

1-Գեղեցիկ լուսեղէն երեւոյթ՝ որ երբեմն կը նկատուի Հիւսիսային բևեռին կողմէն բազմատեսակ ձեւերով ու գոյներով եւ կը տարածուի շատ հեռուները 2-մանրել, փշրել 3-աչքի վերի եւ վարի սկանային արտաքին մասերը, որոնք աչքը փտանգներէ կը պահպանեն 3-սննդարար նիւթ մը - գերեզման 4-երկր, սարսափ - արմատ «մաշիլ» բայի - թել մանելու գործիք 5-աշխատանքի բնագիծ, հանգիստ - անասուն մը 6-

կոհակ - փքին, սլաք 7-հոս - ցուցական մը 8-ճարպային նիւթ մը - հոսող, շարժուն 9-նախ - հայոց թագաւոր ... Գեղեցիկ 10-լուրին մէջ յատկանալ - մխրճուիլ, թաղուիլ:

ՎԵՐԷՆ ՎԱՐ

1-Փոխադարձել 2-իւր հայեցելու աման, տապակ 3-թանկարժէք քար մը - մեղեկութեամբ 4-թել մանելու եւ ոլորելու գործիք - տուրք - տուր մը հնչումը 5-կարգ - սեղանի պիտոյքներէն 6-յառած աչքով նայիլ - մրափ 7-որովայն - իզական անուն 8-անիրաւ, չար - միշտ, շարունակ 9-լուսատու ճարպային նիւթ մը - թրքական արական անուն 10-նոյն տառերը - արիանալ:

ՆԱՍԿԻՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Մ	Ի	Ջ	Ն	Ա	Ը	Խ	Ա	Ր	Հ
Ա	Ս	ՈՒ	Ն	Ք	Ա	Ն	Օ		
Տ	Ա	Ր		Ե	Ե	Ր	Ա	Մ	
Ա	Հ		Հ	Ո	Ղ		Ս	Է	Գ
Ղ	Ա	Զ	Ա	Ր	Ռ	ՈՒ	Ն	Գ	
Ա	Կ	Ա	Տ		Զ	Ի	Ն	ՈՒ	
Տ		Ր	ՈՒ	Լ	Է	Թ		Զ	Ա
ՈՒ	Լ	Մ	Մ	Ն	Ա	Յ	ՈՒ	Կ	
Ն		Ի	Ր	Ա	Ք		Ա	Ա	Ա
Կ	Ո	Կ	Է	Ն		Ն	Ն	Ն	Ն

Քննելով իր անցեալն ու ներկան, անդրադարձաւ իր կամքէն անկախ կատարուած ողբերգութեան. դատնօրէն ամսոսաց փոքր հասակէն իր հայրենիքէն բռնի հեռացուած ու կրօնափոխ դարձած ըլլալուն համար։ Ուստի, ապաշխարելով ու զղլուծի դատն արցունքներ լծափելով, ցանկաց վերադառնալ իր հայրենի տան ժառանգութեան։ Այնուհետեւ աղօթքով ու պահեցողութեամբ իր անձը պատրաստեց ու նուիրեց ճշմարիտ աստուածապաշտութեան. գիտակցելով հանդերձ նման որոշումով ապագային իրեն սպասող վտանգներու գոյութեան, իր ամբողջ էութեամբ փարեցաւ իր հայրերու պաշտած քրիստոնէական սուրբ կրօնին։

Իր բնառնեկան պարագաները՝ տեսնելով անոր ներաշխարհին մէջ տեղի ունեցած այս պայծառա֊ կերպութիւնը ու հոգւոյն քրիստոնէական շնորհ֊ներով ու առաքինութիւններով լցեղութիւը, այլ խօսքով ամբողջ էութեամբ զէպի հայու թիւին վերա֊ դարձր, եւ որպէսզի անոր Գողթնի մէջ մնալը աւելի հաստատուն դառնայ ու Գողթնի տանտէրութիւնը եւս հայածին ժառանգորդ ունենայ, ստիպեցին անոր ամուսնանալ Սիւնեաց նախարարական տոհմէն Բաբգէն իշխանի աղջկան հետ։

Այնքան ժամանակ որ Յովհաննէս Օձնեցի Հայոց Կաթողիկոսը կենդանի էր, Օմար Ամիրայապետի մահուրնէ ետք, աւելի քան տասը տարի Վահան արքեպսա խաղաղ ու երջանիկ իր հայրենի տան մէջ, օրէ օր աւելի ամրապնդուելով իր քրիստո֊ նէական հաւատքին ու հպիակախութեան մէջ։

Տարիներ անցան, ժամանակներն ու պայմանները կրկին փոխուեցան ու Վահանի մտապիտութիւնները իրականութիւն դարձան։ Իսլամութենէն քրիստո֊ նէութեան դարձի լուրը, ինչպէս նաեւ Դամասկոս վերադառնալու փոխարէն իր հայրենի իշխանութեան մէջ իր ստատուածաւ ըլլալու պարտաւոր՝ որպէս զանգատ հասած էր նոր Ամիրայապետին՝ ձեռնաի ախանջին։ Իր վրայաբանութեան մէջ կը պակսին մանրամասնութիւններ, թէ ինչպէ՛ս եւ ուրիշ՝ ան իմացել էր այդ մասին։ Յամենայն զէսք, մտածե֊լով որ նոր Ամիրայապետը կրնայ զինք ճերբակայել եւ բռնադատել վերադառնալու իսլամական կրօնին, առանց ոեւէ մէկուհ տեղեակ պահելու իր կեանքին սպառնալից նոր փտանգիի մասին, իր հետ առնելով կիրն ու քանի ձիաւորներ եւ բաւական զրամ, կը ձգէ հայրենի գաւառը եւ կ'ուղղուի զէպի Բիւզան֊ դաթան Հայաստանի սահմանը։ Ծամբան երբ կը հասնին Վայոց Ձոր, իր կիւր թախանձագին կը խնդրէ իմանալ թէ մ'Եր կ'երթան եւ ինչո՞ւ։ Երբ ամուսինը պարտաւորուած կը քացայայտէ իր մտահոգութիւններն ու մտադրութիւնը, ան անմի֊ջապէս լուր կու տայ իր եղբայրներուն, որոնք շուտով կու գան Սիւնիքէն եւ կը պարտադրեն Վահանին չերթալ օտար աշխարհ, այլ ապաստանել ու պաշտպանուել իրենց մօտ։

Պարտաւորուած կ'ընդունի անոնց առաջարկը ու ժամանակ մը գաղտնի ու փախտաւորան վիճակի մէջ կը մնայ Սիւնիք, որմէ ետք կիւր ձգելով ընտա֊ նիքին մօտ, մի քանի զինուորներով կը մկնի Վրաս֊ տան, յուսալով օգնութիւն ստանալ իր նախարա֊րադուն ազգականներէն. իր ակնկալածը չգտնելով աշնտեղ, յուսախար կը վերադառնայ Հայաստան եւ կ'ապաստանի Արագածոտն գաւառի Յովհաննավանքին մէջ։

Հիւսմ արդէն Վահանի փախուստը Գողթնէն յայտնի եղած էր Հայաստանի արաք Ոստիկանին, որուն գործակալները ամէն տեղ կը փնտռէին ու կը հետապնդէին զինք։ Իր դրամները արդէն սպառելով, իրեն ընկերակցողները մէկ առ մէկ կը ձգեն զինք եւ կը հեռանան իրմէ։ Միակ անձը, որ երկար ժամանակ հաւատարմի մնացած էր իրեն, ան նաեւ յետազային կը փոխուի եւ Վահանին իր թշնամիներուն մատնելու սպառնալիքով իրմէ կը պահանջէ երիվարն ու սուրը։ Վահան իր ձին ու սուրը յաճնէնով կը մնայ անդէն ու մենակ, զինուած միայն հաւատքի ու վճռակամութեան այն զէնքերով, որոնց դէմ ոչ մէկ ոյժ կրնայ պայքարել։

Իր ըջլապտուի մարդոցմէ յոյսը կտրած, իր ընելիքը որդեկու համար՝ ծպտուած աղքատի տեսքով կ'երթայ Վաղարշապատ եւ այնտեղ՝ Սբ. Էջմիածնի մէջ, գաղտնի կը ներկայանայ օրուայ Կաթողիկոս՝ Դաւիթ Արամունցի Հայրապետին։ Կաթողիկոսին կը յայտնի իր ինքնութիւնը եւ մինչ֊ չեւ վերջ հաստատ մնալու որոշումը իր քրիստոնէա֊ կան հաւատքին վրայ. սակայն եկեղեցւոյ պետէն ոչ մէկ օգնութիւն կամ պաշտպանութիւն կը գտնէ, միայն խիտ հրահանգ մը մէկնելու անապատ տեղ մը, որպէսզի իր պատճառով ուրիշներուն որեւէ վնաս չհասնի։ Նոյնպէս օրուայ զինուորական բարձրագոյն պաշտօնը ունեցող հայ Պատրիկ Աշոտի իր կատարած զիտումը որեւէ դրական արդիւնք չի տար։ Բացայայտ էր, թէ ոչ ոք կ'ուզէր Ամիրա֊յապետի աչքին «հաւատուրացութեան» յանցանքի մէջ գտնուող Վահանին պաշտպանութիւն ընծա֊ յելով իր անձը կամ ըջընպատի մարդոց կեանքը վտանգել։

734 տարուայ ձմեռը Յովհաննավանքի մէջ անցը֊ նելէ ետք, երբ գարունը կը բացուի ճամբայ կ'ելլէ երթալու որեւէ անձանօթ վանք մը. ճամբան պատահմամբ կը հանդիպի գրաւորով մարդու մը, որմէ կը խնդրէ զինք տանիլ հեռաւոր մենաստան մը. անձանօթ մարդը իր գրատի վաճքը կը պա֊հանջէ։ Վահան մատնուած ըլլալով կատարեալ աղքատութեան, չունենալով իր հետ որեւէ զրամ, անոր կու տայ իր վերջին սեփականութիւնը երդդ իշխանական ոսկեայ կնիք մատանին։ Այս կերպով կը հասնի Երիթիկ գաւառի մենաստաններէն Խծկոնից Վանքը, ուր կը մնայ վեց ամիս եւ կայսրի կատարեալ ճգնդրական վարքով. սակայն նախադի ալ իր ոյժ ըլլաը զժբախտաբար երկար ժամանակ ծածուկ չի մնար եւ գաւառի իշխանին տիկնոջ հրահանգով կը հեռացուի այնտեղէն, որպէսզի անոր ներկայութեան

Հայ Եկեղեցոյ Լուսապսակ Սուրբեր ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՅԻ՝ ԲԱԶ ՆԱՀԱՏԱԿ Գրեց՝ ԿՈՐԻՒՆ ԱՐՔ. ՊԱՊԵՆՆ

պատճառով տեղի կ'օծնաւորներուն որեւէ վնաս չհասնի։ Այստեղէն կը մեկնի Նիզ գաւառի մէջ գտնուող Թեղեհեաց մենաստանը, որ սակաւաթիւ վանականներ ունեցող ու անյայտ վանքերէն մէկն էր, ուր ամբողջ մէկ տարի կ'ապրի, մէկ հագոււստով ու բոխտան, ճգնդական ամենախիստ կեանքով։ Հըր եւ հնադանդ իր ուսուցիչ հայրերուն ան կը սերտէ Հին ու Նոր Կտակարանները եւ կը խորհրդածէ Աստուծոյ պատուիրաններուն եւ իր փրկութեան մասին։

Արեւամարհելով բոլոր տեսակի մարմնական հաճոյքները, օրէ օր աւելի կը զօրանայ աստուածա֊ յին սիրոյ եւ նուիրումի մէջ ու կը ցանկայ արեան մկրտութեամբ հասնիլ Քրիստոսի ճշմարիտ վկայու֊ թեան։ Յաճախ կրկնելով Սաղմոսի բառերը կ'ըսէր. «**Ինչպէս խիստ ծարաւած եղջերուն կը փափաքի հասնիլ Ջուրի ափին, այնպէս ալ իմ անձս կը փափաքի հասնիլ քեզ, ո՞վ Տէր**»։

Այստեղ իր աւանձնութեան մէջ առիթը կ'ունենայ երկուք մտածելու եւ խողալու իր ներկային անել կացութեան եւ ապագայի անորոշ վիճակի մասին։ Ահա արդէն տարիներ էր, որ ձգած տուն եւ ընտա֊ նիք, լքած հայրենի ժառանգութիւն եւ իշխանութիւն, դարձած էր թժափառակման ու անդատաւար, զինք որսող ցանկացողներու նետէն փախչող հալա֊ծական եղինիկի նման, ինկած էր լեռ ու ձոր։

Երկնքի թռչունները իրենց ձագերուն համար բոյն ունէին. վայրի գազանները՝ որջ. իսկ ինք՝ Խոսրով Գողթնեաց նախարարի գաւառ, Վահան Տանուտէր Գողթան գաւառի, իր սեփական հայրե֊ նիքին մէջ իր գլուխը բարձին դնելու ապահով երդիք մը չուէրէր։ Միթէ մինչեւ ե՛րբ կարելի էր վանքերու եւ մենաստաններու մէջ թծաքնուած, նաեւ ուրիշներուն կեանքը փտանգելով հեռու մնալ թշնամիին լարած որդալայթնեղէն։

Այժմ որ ինք յանդիտութենէ ի գիտութիւն, ի խաւարէ ի յոյս եւ յօտարակման հարազատ յարկ էր վերադարձած ու վերագտած՝ իր ինքնութիւնը, միթէ կրնա՞ր վերադառնալ Դամասկոս ու մտնել անոնց ծառայութեան մէջ, որոնք իր հօր ու հայ֊րենիքի դահլճները հանդիսացած էին։

Ոչ մէկ գնով։ Ուստի, մի անգամ ընդմիջտ պէտք էր վճահատուէր իր խնդիրը. պէտք էր ելք մը գտնել զուրա գալու համար այս անել ու անկարելի կացութիւնէն։ Ահա այստեղ Թեղեհեաց վանքին մէջ Վահան որոշեց քաջարբ երթալ Դամասկոս. այնտեղ անձամբ ներկայանալ Ամիրայապետին։ Բնակա֊ նօրէն ինք տեղեակ էր իրեն սպասող մահուան վտանգին, սակայն միաժամանակ կը մտածէր, որ իր դատը արդար է եւ ինք անձամբ կրնար զայն պաշտպանել Ամիրայապետին առջեւ, պատճառաբա֊նելով որ ինք հայ քրիստոնեայ ծնած էր եւ երբեք ալ իսլամութիւնը գիտալցաբար եւ կամովին չէ որ ընդունած էր, այլ որպէս անդիտակից մատնել մը զինք իսլամացուեցած էին։ Այժմ գիտնալով ճշմարտութիւնը վերադարձած էր իր իսկական կրօնքին։ Ուստի Ամիրայապետը պէտք էր թոյլ տար իրեն համարձակօրէն պաշտելու իր քրիստո֊նէական հաւատը. այլապէս ինք պարտաստ էր ընդունելու նահատակութիւնը իր քրիստոնէական հաւատքին համար։

Այս համոզումով հրաժեշտ առաւ իր ճգնաւոր եղբայրներէն եւ խնդրեց, որ աղօթեն իրեն համար։ Զիցելով Թեղեհեաց վանքը նախ վերադարձաւ Յովհաննավանք, ուր մնաց 735 736 տարուայ ձմեռը։ Իր մտադրութեան տեղեակ դարձած վանքի եղբայր֊ներէն ումանք նախազգալով վտանգը, փորձեցին համոզել զինք, որպէսզի ետ կենար այդ որոշումէն. սակայն Վահան հաստատ էր իր որոշումին վրայ։ Ուստի վանքի առաջնորդ Յովհաննէս Վարդապետը տեսնելով անոր վճռակամութիւնը պարտաւորուած հոգաց իր երկար ճամբորդութեան համար անհրա֊ծեշտ միջոցները, ինչպէս գրաստ, վերաբիւռ, դրամ եւայլն։ Միաժամանակ կարգադրեց որ միաբանութեան ամենէն երրորդ վճռակամութիւնը եղբայրներէն մէկը ընկերանար անոր «ի սպասարուութիւն»։

736 տարուայ Սեպտ. 16ին «Ի Տօնի Սբ. Ոռչի» կը տեսնենք, որ Վահան Սբ. Հաղորդութիւն կը ստանայ Սիւնեաց Երեւորքունիք գաւառի Մաքեմո֊ցաց Վանքին մէջ, ուր եկած էր հաւանաբար վերջին անգամ իր կիւնն ու հարազատները տեսնելու եւ անոնց յայտնելու իր ծրագրած ճամբորդութեան մասին։ Նոյն վանքին առաջնորդ Սողոմոն Վարդա֊պետէն եւս ստանալով քաջալերական խրատներ, ճամբայ կ'ելլէ զէպի Բշոռեհեաց գաւառ եւ կը հասնի Երաշխաւոր կոչուած վանքը, որ կը գտնուէր Սիփան լեռան ստորոտը, Արծկէ գիւղին մօտ։

Այստեղ Վահան մեծ սիրով կ'ընդունուի Վանքի առաջնորդ՝ Արտաւազդ Վարդապետի եւ միաբան֊ներուն կողմէ։ Անոնք հարցուիւորձով կը տեղեկա֊նան թէ անցնող չորս տարիներու ընթացքին ինչպիսի փորձանքներու հանդիպած է. իսկ այժմ

իր հայածանքներու այս հինգերորդ տարին, կ'երթայ անձամբ ներկայանալու Ամիրայապետին, կարծէք Կաթողիկոս ընդունելու մարտիրոսութիւնը։ Երեք օր կը հիւրասիրեն զինք եւ ապա աղօթքներով ու արցունքներով ճամբու կը դնեն Վահանը՝ իրեն տալով վանքի եղբայրներէն մէկը, սպասարկութեան համար։

Հայաստանի սահմաններէն դուրս գալէ ետք՝ իր վկայաբանութեան մէջ այլեւս չեն յիշուիր իր անցած քաղաքներու տեղանունները, Ուրֆայէն պատմական Եդեսիայէն զատ, ուր կ'օթեւանին երկրպագելու Քրիստոսի պատկերին՝ զրոշմուած սուրբ դաստառակի վրայ։ Շարունակելով իր ճամբան սաղմունելով ու աղօթքներով, իրեն ընկերա֊ցող եղբայրներուն հետ վերջնապէս կը հասնի Հայկէսի մօտ, Համարէ եւ Հովսի միջեւ գտնուող Ռուժափ (այժմ Ռուդաֆա կոչուող քաղաքը), ուր պատա֊հաբար կը գտնուէր ձեռամ Ամիրայապետը։

Վահան նախ իր հետ եղող կրօնաւորներն ու սպա֊ստուորները կ'արձակէ, որպէսզի անոնք իր պատճա֊ռով չձերբակալուին։ Այնուհետեւ անձամբ ներկա֊յանալով Արքունի դուռը կը յայտնէ պաշտօնեա֊ներուն իր ո՞վ ըլլալը եւ Արքունիք գալու նպա֊տաւորները կ'արձակէ, որպէսզի անոնք իր պատճա֊ռով չձերբակալուին։ Այնուհետեւ անձամբ ներկա֊յանալով Արքունի դուռը կը յայտնէ պաշտօնեա֊ներուն իր ո՞վ ըլլալը եւ Արքունիք գալու նպա֊տաւորները կ'արձակէ, որպէսզի անոնք իր պատճա֊մանան տեսնելով անոր խեղճ ու ողորմելի վիճակը։ Ան թժախանձազին կը դիմէ նախ զպիրներու պետին (որ իր ուսուցիչը եղած էր), եւ ապա պետական բարձրագոյն պաշտօններ վարող այլ իշխաններու, որպէսզի իր գալստեան ու նպատակին մասին տեղեակ պահեն Ամիրայապետը։ Սակայն կարծէք բոլորն ալ նախազգալով անոր սպասող տխուր վախ֊ճանը, մերթէ քաղցր ու մերթ խիստ խօսքերով կը փորձեն հեռացնել անկէ փորձութեան բաժակը։ Կը թէրազրեն վերադառնալ իր նախինի պալա֊տական հեշտ կեանքին ու փառաւորութեան եւ իր անձը իր դուր չգտնել վտանգներու։

Երբ իր ներկայացուցած բերանացի խնդրանքները կը մնան ապարդիւն, իր ըսելիքները գրաւոր կերպով կը ներկայացնէ Ամիրայապետին, որ ընթեր֊ցելով Վահանի կողմէ գեղեցիկ ձեռագրով ու բո֊վանդակութեամբ գրուած նամակը մեծապէս տպա֊ւորուած կը հրամայէ անոր ներկայանալ ատեան։

Այստեղ չենք ուզել Ամիրայապետի կողմէ կա֊տարուած հարցաքննութեան եւ Վահանի սուած համարձակ պատասխաններուն մանրամասնու֊թեանց մէջ մտնել. միայն համառօտ կերպով բսնք, որ ձեռամ նախ հաճելի լեղուով, ապա սպառնական ոճով եւ վերջաւորութեան զանձ ու հարստութիւն, փառք ու պատիւ, մինչեւ իսկ Գողթան գաւառի իշխանութիւնը խոտտանալով փորձեց համոզել Վահանը վերադառնալու իսլամութեան։ Երբ Վահան մերժեց իրեն կատարուած ամէն ձեւի նիւթական հրապուրել խոտտանիւնրը եւ այդ բոլորին փոխա֊րէն պահանջեց իրեն տալ միայն ազատութիւնը քրիստոնեայ մնալու եւ համարձակ կերպով պաշ֊տելու իր հայրերուն Աստուածը, Ամիրայապետը զայրացած հրամայեց զինք տանիլ բանտ ու չարաշարել։ Սակայն աւելի ստույգ եւ մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար Վահանի անձին ու անցեալին մասին, ան արագընթաց պատուիրակ֊ներ ուղարկեց Մրուռն Ոստիկանին, որ մօտէն ծանօթէ էր Վահանի ծագման ու զարձի պատմու֊թեան։

Մինչ այդ ձեռամ իսլամական կրօնի մասնագէտ իր մարդոց յաճախ բանտ կ'ուղարկէր, որպէսզի տրամաբանութեամբ յաղթելով Վահանին կարենային զինք վերադարձնել Իսլամութեան։ Անոնք իրենց բանալիճներուն մէջ պարտուելով ամօթեանք կը վերադառնային Ամիրայապետին մօտ, խոտտանելով իրենց անգորութիւնը Վահանի սուրի նման հատու խօսքերուն առջեւ։

Մինչ այդ Վահան արդէն զգացած էր, թէ ոչ թէ միայն աղատ ու համարձակ կերպով քրիստոնէական կրօնին հետեւելու իրաւունքը պիտի չարուէր իրեն, այլ որպէս Իսլամութենէն ետ դարձած «հաւա֊տուրաց» իրեն կը սպասուր ծանրադոյն պատիժը։ Ուստի, բանտին մէջ, ութը օր գիշեր ու ցերեկ անոնց կարեւորութիւն տալու մարմնական կորիք֊ներուն, «**անքուն աչքքով եւ աննինջ արտե֊ւանք**», ճգնութեամբ եւ աղօթքով, Սբ. Հոգիի ցո֊րութեամբ կը պարտաստուէր իր անձը մարտիրո֊ութեան Քրիստոսի խաչակից դառնալու պատիւին։ Վերջապէս արագընթաց պատուիրակները վերա֊դարձան Միջագետքէն տեսակցելէ ետք Մրուռն Ոստիկանին հետ, որ պատկան խնդիրներուն քա֊շտեղեղան անձեղ գտնելով ուղարկած էր պատա֊ւիրակներուն հետ Արքունիք, ուր անոնք զեկու֊ցեցին Ամիրայապետին, թէ Վահան նախարարական տոհմէն, ճշմարտախօս եւ խիստաւուն անձնաւորու֊թիւն մըն էր եւ ոչ թէ պակասամիտ կամ հիւան֊դագին նկարագրի տէր անձ։ Ուստի պէտք էր

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- Անօրէն մարդիկ քաղաքը կրակի տուին, իսկ խոհեմ մարդիկ մարեցին զայն։
- Զար ծնունդը ինքզինք արդար կը նկատէ եւ իր հոգւոյն աղտեղութիւնները չի մաքրեր։
- Ուղղամիտներու օրհնութեամբ քաղաքը կը յառաջդիմէ, մինչ ամբարիշտներուն խօսքով կը կործանի։
- Արդար մարդիկը միշտ իրաւունք կը խորհին, մինչ ամբարիշտները՝ նենգութիւն։
- Արդարին համար ոչ մէկ անիրաւութիւն հաճելի է, մինչ ամբարիշտները անիրաւութեամբ պիտի լեցուին։

հաւատք ընծայել անոր ըսածներուն։

ձեռամ հրամայեց անմիջապէս կրկին ատեան բերել Վահանը, ստուգելու համար արդեօք ան իր միտքը փոխա՞ծ էր, թէ ոչ։ «**Ի նոյն յամառութեան կա՞ս պնդութեամբ**» հարցումին, Վահանի պատասխանը կ'ըլլայ, «**ճշմարտութիւնը մէկ է եւ կարելի չէ ճշմարտութեան դէմ որեւէ սուտ խօսք ըսել, ինչպէս կարելի չէ լոյսին խաւար, խաւարին լոյս ըսել, քայց դուռն ըրէ ինչ որ քու կամքը է**»։ Ամիրայապետը ճարահատեալ կը յայտարարէ այսպէս։ Քու խնդիրդ մեր կողմէ մանրամասն քննութեան ենթարկուած է եւ քու խօսքերուդ եւ վարմունքիդ մէջ ո՛չ մէկ սուտ կամ խաբուութիւն կայ. սակայն որովհետեւ դուռ մեր կրօնքը հրապա֊րակաւ անարգեցիր եւ քու այս յանդուգն վարմունքը կրնայ ուրիշներուն մօտ վատ օրինակ հանդիսանալ, ուստի կարելի չէ քեզի ներել․․․։ Ամիրայապետին շուրջ գտնուող խորհրդականները արդէն բարձր թաճայն կ'աղբալակէին եւ անոր մահուան վճիռը կը պահանջին։ «**Եւ չըջեաց զգոյն երեսացն Ամիրա֊յապետին եւ հրամայեաց հանել զնա արտաքս եւ սպանանել**»։

Սակայն դատնալով զահհապետին գաղտնի յանձ֊նարարեց անոր վերջին փորձ մը բնել փրկելու անոր կեանքը հետեւեալ կերպով։ Անմիջապէս չզլխա֊տել զինք, նախ թեթեւ ետւրի հարեւածով մը վիրա֊ւորեց, արկնել զինք եւ թէր Վախնալով տկարանալ իր հաւատքին մէջ, չսպաննել այլապէս եթէ դարձի չգալ՝ գլխատել։

Մինչ Վահան ուրախութեամբ ընդունելով իր մահուան վճիռը, սպամներ արտասանելով ու փա֊ռաբանելով զԱստուած, զահհապետին հետ կ'երթար դէպի կատափնարան, անոր կը հետեւէր տարբեր ազգերէն բաղկացած քրիստոնեայ բաղմութիւն մը, որոնք մէջ էին անկաւարած Հայաստանէն Վահանին ընկերացած հայ կրօնասուրները։ Հասնելով մահա֊պարտներու վայրը, մինչ Վահան ձեռքերը երկինք բարձրացուցած գոհաբանական աղօթքներ կ'ըսէր, զահհապետին վերջին փորձերը խնայելու անոր կեանքը մնացին անօգուտ. ուստի գործարկելով Ամիրայապետի հրամանը, պարտաւորուած գլխա֊տեց զինք։ Վահանի նահատակութիւնը կատարու֊եցաւ, Աւագ Երկուշաբթի սուաւօտեան՝ 18 Մարտ 737 թուականին։

Անոր մատուցներուն տիրանալու համար, ներկայ յոյն, ասորի եւ նեստորական քրիստոնեաներու միջեւ վճճ ծագեցաւ։ Նախ տարին ու ամփոփեցին անոր մայնալը Օտարաց Գերեզմանատան մէջ, քանի որ այնտեղ բնակուող հայեր չկային. սակայն վերջաւորութեան նոյն քաղաքին յոյն եպիսկոպոսը տէր դարձաւ անոր մարմնին. ապա բոլոր քրիստոնէները հաւաքուելով կատուցեցին գեղեցիկ վերջարան մատուռ մը եւ զարդաբեկին մեծազարդ սպասնիքով ու այնտեղ փոխադրեցին սուրբին անձինները, որուն միջոցաւ արդէն բժշկութեան հրաչքներ կը կատար

Վեր քաղաքապետական Ալիյա Շահինջոլու չատ պաշտան ու կովիկ չափադառաժիւններով չորհրդարանի յայտնեց իր մասնակից բնիկներուն, Շիրճի Բաղադապալան Իննօնիւի, Արամ Արապաւանի, փոխ Բաղադապալան Վազգէի Պարսին ու բոլոր անոնց, որոնք իրենց զորացեալութիւն բերած էին այս ձեռնարկին: Ապա եղաւ հիւրասիրութիւն, որու ընթացքին արուեստագէտները ընդունեցին ջերմ չորհրդարանի թիւններ:

Յաջորդութեան իր այս նոր հանգրուանին վրայ մասնադաշարս կը չորհրդարանք Ալիյա Շահինջոլուն, ապա արժեք ընկերակիցներ, որոնք հաճելի գիշեր մը պարզեցին երաժշտականներուն: